ՀՏԴ : 929:947.925 Գրիգորյան + 39

Doi:10.54503/0135-0536-2025.2-298

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Ծննդյան 95-ամյակի առթիվ)*

Սյունյաց աշխարհի պատմության լավագույն գիտակներից և իրեն ճանաչողների նվիրական հուշաշխարհում անկորնչելի տեղ ունեցող անհատներից է վիմագրագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Գրիգորյանը:



Ծնվել է 1930 թ. մարտի 2-ին Հյուսիսային Օսիայի Վլադիկավկազ քաղաքում, տեղի միակ հայկական եկեղեցու քահանա Տեր Մեսրոպի՝ ծնունդով Բիթլիսից, Էրզրումի Սանասարյան վարժարանում կրթություն ստացած ուսումնազարդ ու գիտակ հոգևորականի և Սարիղամիշում ծնված Շուշանիկի ընտանիքում:

1937 թ. Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ հայագիտության ապագա մշակը հաճախում է № 11 դպրոցը: 1947–1949 թթ. կրթությունը շարունակում է Էջմիածնի հոգևոր ճեմարանում, 1950–1954 թթ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո գործուղվում է Եղեգնաձորի շրջան, նշանակվում Հորս գյուղի դպրոցի տնօրեն (1954–1956 թթ.): 1956–1960 թթ. աշխատում է «Հայպետհրատ»-ում՝ որպես ավագ սրբագրիչ, 1962-ից՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Այստեղ նա պիտի իրականացներ իր արդյունավոր ու բովանդակալից առաքելությունը՝ ավագ լաբորանտից հասնելով առաջատար գիտաշխատողի և վիմագրության բաժնի վարիչի պաշտոնի՝ դառնալով գիտական այդ օջախի սյուներից:

Գիտության աշխարհ Գ. Գրիգորյանի մուտքն ազդարարվում է «Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին» հոդվածով («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 260–263):

Անխոնջ գիտահետազոտական աշխատանքի առաջին իսկ տարիներից ուշադրության կենտրոնակետ է դառնում Սյունյաց աշխարհը՝ իր վանական կյանքով: Գիտության անդաստան նոր մուտք գործած հետազոտողն իր անձը նվիրում է Սյունիքի վանական խոշոր միաբանությունների վարչատնտեսական գործունեության հետազոտմանը: Արդյունքում ծնվում է «Սյունիքի վանական

---

* *Ներկայացվել է 06. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

կալվածատիրությունը IX–XIII դարերում» թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանում է 1967 թ.՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան. 1973-ին աշխատանքը հրատարակվում է առանձին գրքով: Ու թեև այն նվիրված է Սյունյաց վանքերին, այնուհանդերձ, ներառում է առհասարակ հայոց վանքերին վերաբերող շատ ու շատ արժեքավոր բացահայտումներ:

1981 թ. Գ. Գրիգորյանն իր հաջորդ մեծարժեք աշխատության մեջ՝ «Սյունիքը Օրբելյանների օրոք», հիմնվելով մատենագրական և վիմագրական վկայությունների վրա, ուսումնասիրում է Սյունիքի քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքը՝ սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների և թուրքմենական ներխուժումների ժամանակաշրջանում, ներկայացնում հայ-վրացական գինակցության շնորհիվ Սյունիքում Օրբելյանների հաստատման, նրանց՝ գերիշխանության հասնելու, ինչպես նաև միջավատական հարաբերությունների իրական պատկերը, տալիս Սյունիքի կրթամշակութային օջախների սեղմ նկարագիրը:

Սյունիքը նաև գիտնականի դոկտորական ատենախոսություն թեման է՝ «Սյունիքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը IX–XV դարերում»: Այս աշխատության մեջ վիմագրական ու մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա հեղինակը ներկայացնում է Սյունյաց լեռնաշխարհում տիրող քաղաքական իրադրությունը և իշխանական տների ծավալած գործունեությունը՝ հատկապես բարձրագույն դպրոցների բացման և պահպանման ուղղությամբ: 1985-ին հետազոտողին շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1990 թ. Երևանում հրատարակված «Очерки истории Сюника (IX–XV вв.)» *ուսումնասիրության մեջ ներկայացված են նոր գրավոր աղբյուրներ, մասնավորապես՝ հեղինակի կողմից Վահանավանքի՝ Սյունյաց տիրակալների հանգստարանների պեղումների ժամանակ հայտնաբերված վիմական արձանագրությունները:*

Ռուսաստանի գիտական միջավայրում լայն արձագանք է գտնում 2004 թ. Մոսկվայում լույս տեսած «Род Орбелянов и история Сюника в IX–XV вв.» *աշխատությունը՝ շարադրված փաստական հարուստ նյութի՝ մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրների հիման վրա: Այստեղ անվանի միջնադարագետ-պատմաբանը հանգամանորեն քննում է հարևան հարավային երկրի վայ պատմաբաններ Զիա Բունիաթովի, Դավուդ Ախունդովի, Ֆաիզա Մամեդովայի ու այլոց հավակնոտ տեսությունները Արցախի և Սյունիքի անցյալի վերաբերյալ. գիտնականը ոչ թե պարսավում, այլ փաստերով, հիմնավորումներով հերքում է կովկասյան ժողովուրդների պատմությունը խեղաթյուրողներին և տարածքային հավակնություններ ունեցող քաղաքական վերնախավի սպասարկու «գիտնականներին»:*

Պատմաբան Ս. Հախվերդյանի համահեղինակությամբ՝ Գ. Գրիգորյանը կազմում է բուհական ձեռնարկ՝ «Սյունիքի պատմություն (բուհական համառոտ դասընթաց)» (2001), որ նվիրված է Սյունյաց աշխարհի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Հայաստան աշխարհի Սյունյաց հատվածում կա հոգևոր-ճարտարապետական մի մարգարիտ, որն առմիշտ դառնում է ճանաչված գիտնականի մեծ սիրո ու խանդաղատանքի առարկան՝ X դարում Զագիկ իշխանի որդի Վահանի կառուցած Վահանավանքի վանական համալիրը: 1966 թ. Գ. Գրիգորյանը նշանակվում է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար և կրում այդ առաքելությունը ողջ կյանքի ընթացքում: Արշավախումբը նպատակ ուներ պեղումներ կատարելու հայ ճարտարապետության Սյունաց դպրոցի առավել հայտնի հուշարձանախմբերից մեկում՝ Վահանավանքում: Այդ ժամանակվանից ի վեր՝ Վահանի կառուցած վանական համալիրը մուտք է գործում բոլորանվեր ուսումնասիրողի գիտական, նաև առօրյա կյանք: Ավելի քան 40 տարի ձգված հետևողական աշխատանքի շնորհիվ անհայտության մշուշից ազատվում են պատմագիտական տեսանկյունից բարձրարժեք մի քանի տասնյակ վիմագրեր, որոնք անձայն բարբառում են զանազան պատմություններ Սյունյաց և Աղվանից արքայատան ներկայացուցիչների, ինչպես նաև՝ հոգևոր գործիչների մասին: Երկրորդ ծնունդն ապրած վիմագրերը նորություն էին հայագիտության՝ մասնավորապես Սյունիք և Արցախ աշխարհների միջնադարյան պատմության հիմնահարցերը լուսաբանելու առումով: Առաջին անգամ գիտության մեջ շրջանառվում է Սյունյաց արքայատան ներկայացուցիչների գահացանկը. նշվում են նրանց գահակալության ստույգ տարեթվերը, որոնք եթե ոչ մինչև վերջերս, գոնե տևական ժամանակ ոչ լիարժեք էին ներկայացվում հայագիտական աշխատություններում: Բազմատասնամյա աշխատանքի արդյունքներն ամփոփում են գտնում 2007 թ. Երևանում լույս ընծայված երկլեզու՝ հայերեն և ռուսերեն «Վահանավանք (պատմահնագիտական ուսումնասիրություն)» գրքում:

Տարբեր տարիների Վահանավանքում կատարված պեղումներին մասնակցում են հարյուրավոր ուսանողներ. նրանցից մի քանիսը հետագայում դառնում են գիտության, արվեստի, կրթության, քաղաքականության և մարդկային գործունեության այլ ոլորտների հայտնի անուններ:

Վահանավանքի պեղումները ղեկավարելու տարիներին բազմեռանդ ուսումնասիրողն ու կազմակերպիչը թղթին հանձնելով անմահացնում է առավել հիշարժան դեպքերն ու իրադարձությունները: Դրանք 2009-ին Երևանում լույս են տեսնում առանձին գրքով (հայերեն և ռուսերեն)՝ «Վահանավանքի վերածնունդը. հնագետի օրագրից»: Խոսելով պեղումների մասնակիցների մասին՝ հեղինակն ասում է. ««Գործող անձանցից» շատերն այսօր մեզ հետ չեն. նրանց երբեք չի կարելի մոռանալ: Այս գիրքը մի կերոն է նրանց հիշատակը հավերժացնելու ճանապարհին»: Անգամ ոչ մասնագետները, կարծում ենք, մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով կընթերցեն այս գիրքը: Վահանավանքի վերամարմնառության գործում մեծ է Գ. Գրիգորյանի դերը:

Ազնիվ ու բարեխիղճ մտավորականի գիտական աշխատանքի հիմնական ուղղությունը, իհարկե, հայոց վիմագիր արձանագրություններն էին: 1986–2010 թթ. գլխավորում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժինը: Մեծաեռանդ իր աշխատանքով լուրջ ներդրում է ունենում հայագիտության այս բնագավառում: Հիշատակության է արժանի հայ գաղթաշխարհի մի հատվածի վիմական արձանագրությունների հետազոտությունը:

1960-ականների վերջերին Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ կազմվելու էր վիմագրական արշավախումբ՝ Խորհրդային Միության տարածքում ժամանակին եղած հայկական գաղթօջախների հայերեն ու հայերին վերաբերող օտարալեզու վիմագրերը հավաքելու և գիտական հիմունքներով հրատարակելու նպատակով: 1960–1996 թթ. հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերը, Գ. Գրիգորյանի գլխավորությամբ, ուսումնասիրում են Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի տարածքում գտնվող հայերեն և հայերին վերաբերող ավելի քան 1500 վիմագիր արձանագրություն, ինչպես նաև՝ Ուկրաինայի և Ռուսաստանի թանգարաններում պահվող թանգարանային իրերի բազմաթիվ հայերեն մակագրություններ: Այս աշխատատար գործի ծանրակշիռ մասը իր ուսերին է կրում հայ վիմագրագիտության երախտավորը: Նրա աշխատասիրությամբ՝ գիտարշավների արդյունքները լույս են տեսնում «Դիվան հայ վիմագրության» (Ուկրաինայի և Մոլդովայի հայկական վիմագրերը) 7-րդ (1996) և «Դիվան հայ վիմագրության» (Ռուսաստանի Դաշնության հայկական վիմագրերը) 8-րդ (1999) պրակներում:

Գ. Գրիգորյանի մասին երախտիքի խոսքեր են ասել Կրեմլի Զինապալատի, Մոսկվայի Պատմության կենտրոնական թանգարանի, Թեոդոսիայի Հայկական քարեղարանի գիտաշխատակիցները, որոնց խնդրանքով վաստակաշատ գիտնականը ռուսերեն է թարգմանել բազմաթիվ գրաբարյան բնագրեր, հիմնադրել թանգարանային առանձին բաժիններ: Վիմագրագետին է վստահվել նաև Թեոդոսիայի Սբ Սարգիս եկեղեցու սրահներում բացված՝ Խորհրդային Միության մեջ առաջին Հայկական քարեղարանի արձանագրությունների ռուսերեն թարգմանությունը: Բացառիկ արժեք են Գ. Գրիգորյանի՝ գրաբարյան վիմական բնագրերի ռուսերեն թարգմանությունները՝ խիստ կարևոր սկզբնաղբյուրներ կովկասագիտության համար. այդ բնագրերի լույսընծայումից հետո Ադրբեջանի Հանրապետության «միջնադարագետները» դադարեցրին անիմաստ պնդումները, թե, իբր, Սյունիքն ու Արցախը եղել են «Կովկասյան Ալբանիայի ծայրամասային գավառներ»: 1976 թ. Կրեմլի Զինապալատի թանգարանային բաժնի վարիչ Մ. Պոստնիկովայի խնդրանքով հայ գիտնականը ուսումնասիրել է «Վրացական» հորջորջվող ֆոնդը և պարզել, որ այնտեղ պահվող 26 իրերից 21-ն ունեն հայերեն, 3-ը՝ հունարեն և ընդամենը 2-ը՝ վրացերեն արձանագրություններ. ֆոնդը վերանվանվել է «Հայկական»:

Գ. Գրիգորյանը ոչ միայն ուսումնասիրել ու հրատարակել, այլև կորստից փրկել է որոշ արձանագրություններ. Թեոդոսիայում գտնվող Հովհ. Այվազովսկու տուն-թանգարանի ծովակողմյան պատին եղել են ավազապատ հայերեն արձանագրություններ: Համառ ջանքերի շնորհիվ ավազը մաքրվել է, վերականգնվել են մեսրոպագիր արձանագրությունները: Ավազից, ասել է թե՝ մոռացումից ազատվել են նաև Կիևի Սբ Սոֆիա տաճարի պատերին փորագրված 24 հայերեն արձանագրությունները:

Իր արդյունառատ գործունեության ընթացքում Գ. Գրիգորյանը հավաքել և վերծանել է հարյուրավոր նորահայտ վիմագրեր:

Գ. Գրիգորյանի գրչի ծնունդ են մեծաթիվ գիտական հոդվածներ, որոնց մի մասը հրապարակվել է արտասահմանում: Ճանաչված մասնագետը հոդվածներ

է գրել նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» և «Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան»-ի համար: Մոտ երեք տասնյակ են կազմում նրա գիտական, նույնքան էլ՝ լրագրային և ամսագրային հոդվածները: Վիմագրագետի խմբագրությամբ հրատարակվել են գրքեր, եղել են նաև հրապարակումներ նրա ու նրա աշխատությունների վերաբերյալ: Հաճախ է զեկուցումներով հանդես եկել Սյունիքի աշխատավորության, ուսանողության առջև, տարածաշրջանում տեղակայված զինվորական ստորաբաժանումներում:

1980 թվականից ցկյանս վիմագրագետն եղել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, 1993 թ.՝ ստացել պրոֆեսորի կոչում:

Մեծ է նրա դերը երիտասարդ գիտնականների պատրաստման գործում: Եղել է շուրջ մեկ տասնյակ ասպիրանտների գիտական ղեկավար, նրանցից շատերը դարձել են գիտության թեկնածուներ:

Գիտական աշխատանքին զուգահեռ՝ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1973–2010 թթ. դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, 1973–2016 թթ.՝ Երևանի պետական համալսարանում, 2003–2010 թթ.՝ Հր. Աճառյանի անվան համալսարանում: 1975–1979 թթ. ակադեմիկոս Վ. Հարությունյանի հրավերով, գրաբար և վիմագրություն է դասավանդել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում:

Գիտության վաստակավորը հեղինակել է հայ վիմագրության՝ մեր իրականության մեջ առաջին բուհական ձեռնարկը՝ «Հայկական վիմագրություն (համառոտ ձեռնարկ բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների համար)» (Երևան, 2000):

Անցյալ դարի 80-ականների վերջին ու 90-ականների սկզբին՝ Արցախյան շարժման և ԽՍՀՄ փլուզման պատմաշրջանում, Գ. Գրիգորյանը Արցախի ու արցախահայության համար կենսականորեն կարևոր հարցեր արծարծող բազմաթիվ նամակներ ու հեռագրեր է հղում խորհրդային ղեկավարությանը՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությանը, Գերագույն խորհրդի պատգամավորներին, կենտրոնական մամուլի և հեռուստատեսության պատասխանատուներին. փորձեր էին սրանք, որ անում էր ազգակից մարդկանց, առհասարակ մարդկանց սիրող անհատը՝ նրանց ցավն ու տվայտանքը գոնե ինչ-որ չափով մեղմելու նպատակով: 2005 թ. Երևանում այդ նամակները հրատարակվում են «Ղարաբաղյան օրագիր (1988–1992)» վերնագիրը կրող առանձին գրքով:

Գիտության ասպարեզի նվիրյալ ներկայացուցչի ներդրումը գնահատվել է. 1988 թ. մայիսի 12-ին ԳԱ նախագահության կողմից նա պարգևատրվել է գովեստագրով, 2003 թ.՝ պատվոգրով, 2005 թ.՝ վաստակագրով, 2010 թ. մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:

Գիտամանկավարժական ահռելի վաստակ ունեցող մտավորական գործիչը մահկանացուն կնքում է 2018 թ. հոկտեմբերի 14-ին՝ 88 տարեկան հասակում:

2019 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը «Վաստակաշատ գիտնականներ» մատենաշարով տպագրում է գիտնականի կենսամատենագիտությունը (կազմող՝ Սաթենիկ Խուրշուդյան, խմբագիր՝ Գագիկ

Սարգսյան)՝ յուրօրինակ քայլ՝ գնահատանքի, երախտագիտության, խնկարկումի՝ առ հոգատատար ուսուցչապետը, նվիրյալ գիտնականը, բարեհիշատակ մարդը:

Ինքս բարեբախտություն եմ ունեցել լինելու Գ. Գրիգորյանի սաներից: Նա նաև իմ ավարտաճառի ղեկավարն էր: Սա այն դեպքն է, երբ խոսքը տարբեր սերունդների ներկայացուցիչների իսկական մեծ ու անկեղծ բարեկամության մասին է, որ շարունակություն ունեցավ բուհական տարիներից հետո էլ՝ մինչև ուսուցչապետի մահը:

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ

Բ. գ. թ.: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմություն, տերմինաբանություն: Հեղինակ է 1 մենագրության և 5 հոդվածի:
ORCID: 0009-0009-0758-8752. hrachyab@gmail.com